

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » ապրիլ 2026թ. No 1824 – Ա

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ «ՌԻՍՈՂՅԵ-ՍԻԲԻՐՍԿԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ
ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ, 665462, ԻՐԿՈՒՏՍՎԻ ՄԱՐԶ, ՌԻՍՈՂՅԵ-ՍԻԲԻՐՍԿՈՅԵ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ՌԻՍՈՂՅԵ-
ՍԻԲԻՐՍԿԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ, 665462,
ԻՐԿՈՒՏՍՎԻ ՄԱՐԶ, ՌԻՍՈՂՅԵ-ՍԻԲԻՐՍԿՈՅԵ, ՌՈՒՍԱՍՏԱՆ «ԲԱԿԼՈՖԵՆ-ՌԻՍՈՂՅԵ
ԲԱԿԼՈՖԵՆ ԴԵՂԱՀԱՏԵՐ 25ՄԳ; (50/5X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ
ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ դեղի գրանցման կասեցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1122-Ն որոշման 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի մարտի 09-ի թիվ 23147 փորձագիտական եզրակացության համաձայն հայտնաբերվել է անվտանգության, արդյունավետության, որակի շտկման ենթակա անհամապատասխանություն սահմանված պահանջներին, հատկորոշիչներին, նոր գիտական տվյալներին:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 2 հավելվածի 60-րդ կետի՝ դեղի գրանցումը կասեցվում է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 31-րդ մասով սահմանված դեպքերում:

Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 31-րդ մասի 2-րդ կետի՝ դեղի գրանցումը կասեցվում է, եթե հայտնաբերվել է անվտանգության, արդյունավետության, որակի շտկման ենթակա անհամապատասխանություն սահմանված պահանջներին, հատկորոշիչներին կամ որակի նորմատիվ փաստաթղթին, նոր գիտական տվյալներին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 2 հավելվածի 62-րդ կետի՝ Դեղի գրանցումը կասեցնելու վերաբերյալ հրամանն ընդունվում է փորձաքննության եզրակացությունը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով կասեցման ժամկետը:

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, 16-րդ հոդվածի 31-րդ մասի 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետը, N 2 հավելվածի 62-րդ կետը, ինչպես նաև իրավական և վերոգրյալ փաստական հիմքերից ելնելով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել Ռուսաստանի «Ուսոյե-Սիբիրսկի քիմիական և դեղագործական գործարան» ԲԲԸ, 665462, Իրկուտսկի մարզ, Ուսոյե-Սիբիրսկոյե արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «Ուսոյե-Սիբիրսկի քիմիական և դեղագործական գործարան» ԲԲԸ, 665462, Իրկուտսկի մարզ, Ուսոյե-Սիբիրսկոյե, Ռուսաստան «Բակլոֆեն-Ուսոյե բակլոֆեն դեղահատեր 25մգ; (50/5x10/) բլիստերում» դեղի գրանցումը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝ ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա.Առաքելյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տրամադրումը «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, Առողջապահական և